ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԱՊՁԲ-20-7/2-1

ք. Երևան 26 -ը հոկտեմբերի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մանուչարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 348 000 000 (երեք հարյուր քառասունութ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը (ակցիզային հարկ, բնապահպանական հարկ և այլն) հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում Վաճառողին վճարման ենթակա գումարից:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական
ՀՀ ֆինանսների նախարարության	Միավորում» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյանի 16
Հ/Հ 900011144079	«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 2472300596330010
ՀՀ պաշտպանության նախարարության	ՀՎՀՀ 90018697
ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ս. ՅՈԼՉՅԱՆ	Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ՀՄԱԱՊՁԲ-20-7/2-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.2.3.4.5. Կոշիկ ճտքավոր (զույգ)

Բաղկացած է կոշկերեսի քթամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից (տակացուից) և հանովի-դնովի ներդիրից, ԳՕՍ 19137-89-ով նախատեսված ճտքավոր կոշիկներին համարժեք:

Քթամասը մշակված է ամբողջական առաջամասով և ճտքերի կրնկամասում՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով: Լեզվակը ամրացված է առաջնամասին և ճտքերին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են մաշվածադիմացկուն թելով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը ճտքավոր կոշիկի ներսամասի դետալներ:

Ճտքավոր կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջերավոր անասունի կաշվից՝ ստացված քրոմային դաբաղման եղանակով, սև գույնի, բարձր որակի բնական մակերեսով (կաշվի մշակումը նախշով (նակատով), առանց վնասվածքների), մեխանիկական վնասվածքներից դիմակայուն և մշակված անջրանցիկ (հիդրոֆոբիկ) ծածկույթով: Կաշվի անջրաթափանցելիության աստիճանը դինամիկ վիճակում պետք է ապահովի 2-4 ժամ:

Կոշիկը պետք է ապահովի օդափոխանակությունը, այսինքն օդա-գոլորշանցիկությունը և ջերմահաղորդականությունը, որը կապահովի քրտնակլանումը:

Կոշկերեսի քթամասի և հետնամասի նախշով (նակատով) կաշվի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 1,8մմ, լեզվակը՝ 1,2 մմ, իսկ ճտքերը՝ 1,6մմ հաստության, քթամասն ու կրնկամասը՝ կոշտ, կրնկամասի բարձրությունը՝ համաձայն ԳՕՍ 19137-89 1.3.3 կետի, շեղումները՝ համաձայն նշված ԳՕՍ-ի 1.3.5 կետի պահանջների:

Քթամասը և կրունկամասը ներսից մշակվում է թերմոպլաստիկ նյութով, ընդ որում քթամասը 2,0-2,4մմ, իսկ կրնկամասը՝ 2,6-3,0մմ հաստությամբ (թույլատրելի է երկշերտով՝ առանց հաշվի առնելով սոսինձի հաստությունը): Մշակված նյութերը պետք է լինեն այնպիսի ամրության, որ շահագործման ողջ ընթացքում թույլ չտան կոշիկի քթամասի և կրնկամասի նվազագույն դեֆորմացում:

Ներբանին ամրացվող հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված, նվազագույնը 2մմ հաստության բնական հումքից՝ պադոշից (խոշոր եղջերավոր անասունի վզակաշի ԳՕՍ-29277) և կոշիկի համար նախատեսված 2,0-2,4մմ հաստության ստվարաթղթից (ԳՕՍ-9542), որոնց միջև դրվում է 11-14սմ երկարության, 0,8-1,2սմ լայնության և 0,7-1,0 մմ հաստության մետաղական սուպինատոր:

Նախշով (նակատով) կաշվից արտադրելու դեպքում քթամասը ներսի հատվածից մշակվում է կաշվե ներդիրով: Նախշով (նակատով) արտաքին կաշի օգտագործելու դեպքում քթամասից վերև, հետնամասի արտաքին գոտու, ճտքերի և լեզվակի կաշիները ներսից մշակվում են առանց սոսնձման 1,0-1,5մմ հաստությամբ բնական կաշվի հումքից (սպիլոկից) /կաշվի երկրորդական շերտով/, մուգ գույնի՝ համաձայն ԳՕՍ-940-ի:

Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է 1,1-1,3մմ հաստության և 2,0-3,0սմ լայնության բնական կաշվից, որի միջուկը մշակվում է 5,0-7,0 մմ հաստության, 60±0,5 կգ/մ³ խտությամբ սպունգե (պենոպոլիուրետան) նյութով: Լեզվակը պետք է լինի փակ փականով 1,2-1,4մմ հաստության կաշվից, բարձրությունը՝ ճտքի վերին եզրից ներքև 6,0 սմ-ից ոչ ավել:

Ճիտքը և քթամասը կարակցված են չորս կարով, որի ամրությունը առնվազն 150Ն/սմ է Կրնկամասը, ճիտքն ու հետնամասի արտաքին գոտին կարակցված են 2-4 կարով, որի ամրությունը առնվազն 115Ն/սմ է՝ համաձայն ԳՕՍ-9290-ի:

Կոշիկի ճտքերի բարձրությունը 40-44 միջին չափսի համար 21-23սմ է, մնացած չափսերի շեղում՝ ± 3մմ: Բարձրությունը չափվում է ճտքի արտաքին մասով, կրնկամասում ներբանի և ճտքի միացման եզրից մինչև ճտքի վերին եզրը:

Ճտքի քուղերի անցքերը մշակվում են 7-9 զույգ կոճականցքերով (կախված կոշիկի չափսերից) ցինկապատ՝ պատված պաշտպանիչ ներկով, որը կապահովի խոնավ և ցածր ջերմաստիճանի ժամանակ կորոզիայից և կկանխարգելի քուղերի սառցակալումը: Թույլատրվում է վերևի հինգ զույգի փոխարեն նաև կեռիկների կիրառում: Քուղերը պետք է պատրաստված լինեն ամուր և անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, որի որակը կապահովի կոշիկի սահուն և արագ քուղավորումը, յուրաքանչյուրի վերջույթները (նակոնեչնիկները) թերմոմշակված՝ երկարությունը 1,2-1,6սմ: Քուղերի երկարությունը առնվազն՝ 150 սմ:

Ներբանն ամրանում է ձուլման եղանակներով:

Ձուլման եղանակով ամրացման դեպքում ներբանի խզման բեռնվածությունը առնվազն 200Ն/սմ համաձայն ԳՕՍ 19137-89 7-րդ աղյուսակի:

Ներբանի երկայնական կտրվածքի նվազագույն հաստությունը առնվազն 4մմ է: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ, առանց ճռճվածքի, քթամասի բարձրությունը գետնից՝ ոչ ավել 2,0սմ, ներբանը՝ մաշվածադիմացկուն ռետինից, որի ջերմա և ցրտադիմացկունությունը պետք է ապահովի -40C⁰ - +80C⁰՝ ապահովելով շարային քայլը և կեցվածքը: Տակամասի ստորին հատվածի միջնամասում պետք է դաջված լինի կոշիկի չափսը (թվերով) և նշում մաշվածադիմացկանության վերաբերյալ: Ներբանը պետք է ապահովի չսայթաքելու գործոնը և հետքերի զարդանախշերից ապահովի հնարավորինս արագ ինքնամաքրումը:

Զուլման եղանակով ամրացման դեպքում կոշիկի ներբանին միացվող առաջին շերտը արտադրվում է պոլիուրետանից: Երկրորդ շերտը մաշվածադիմացկուն ռետինից՝ համաձայն ԳՕՍ-17311-ի: Երկրորդ շերտի նվազագույն հաստությունը առնվազն 4 մմ է, իսկ հետքով(նախշի)՝ առնվազն 8մմ է:

Հանովի-դնովի ներդիրը պատրաստված է բնական հումքից՝ լավ հարթեցված պադոշից (խոշոր եղջերավոր անասունի մեջկամասի կամ վզամասի կաշվից, ԳՕՍ-29277 և ԳՕՍ-1903), կոշիկի չափսին համապատասխան, հաստությունը՝ 2,0-2,5մմ:

Լեզվակի արտաքին երեսի վերին հատվածում պետք է դաջված լինի արտադրող կազմակերպության անվանումը, <<Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքն արգելվում է>> տեքստը և արտադրման ամիսն ու տարեթիվը:

Ճտքավոր կոշիկների արտադրման համար խստորեն արգելվում է օգտագործել խոզի կաշի:

Ճտքավոր կոշիկի աջ ու ձախ զույգը պետք է լինի միևնույն չափսերի, լայնության և կառուցվածքի:

Յուրաքանչյուր հանձնված խմբաքանակի համար մատակարարը պարտավոր է ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված կամ հավատարմագրված կազմակերպության կողմից իրականացված ճտքավոր կոշիկների լաբորատոր հետազոտության արդյունքները՝ օգտագործված բոլոր կաշիների հաստության, ինչպես նաև ներբանի խզման բեռնվածության վերաբերյալ:

Մատակարար կազմակարպությունը պայմանագիրը ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան 7 /յոթ/ օրացուցային օրում պատասխանատու ստորաբաժանմանը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքատեսակի երկուական զույգ հսկման նմուշներ՝ մատակարարվող տեսականուց (նմուշը պետք է լինի 43 չափսի), որոնք պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրում նշված պահանջներին: Մատակարարված ապրանքատեսակի ընդունումն իրականացնելու նպատակով ապրանքատեսակի հսկման նմուշները ներկայացվում են պատասխանատու ստորաբաժանմանը՝ արտաքնապես դրա համապատասխանությունը գնահատելու համար: Ներկայացված հսկման նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել ճտքավոր կոշիկի արտադրման համար օգտագործված բոլոր նյութերը՝ ամրացված գծագրական թուղթի վրա և դրանց վերաբերյալ որակի հավաստագրերը:

Ներկայացված հսկման նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել ճտքավոր կոշիկի արտադրման համար օգտագործված բոլոր նյութերը՝ ամրացված գծագրական թուղթի վրա և որակի հավաստագրերը՝ կաշվի և ներբանի համար:

Ներկայացված նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետի հետ և հաստատվում է ՀՀ ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետի կողմից:

Փաթեթավորումը առնվազն հնգաշերտ ստվարաթղթե արկղերով, որի մեջ պետք է տեղավորված լինի 10 (տաս) զույգ ճտքավոր կոշիկ: Արկղերը պետք է լինեն տպագրված, որի վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, իսկ արտադրման ամիսն ու տարեթիվը լրացվում է ձեռքով:

Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված ճտքավոր կոշիկի որակը (կրման (շահագործման) ժամկետը՝ ոչ պակաս, քան 8 (ութ) ամիս անընդմեջ շահագործումը: Մատակարարը նաև պարտավոր է երաշխավորել մատակարարված ճտքավոր կոշիկների այն խմբաքանակի որակը, որը պատասխանատու ստորաբաժանման կողմից կդրվի երկարաժամկետ (մինչև 3 տարի) պահպանման, ինչպես նաև այդ խմբաքանակից շահագործման նպատակով հատկացնելուց հետո՝ ոչ պակաս, քան 8 (ութ) ամիս անընդմեջ շահագործումը: Ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակները մատակարարը պարտավոր է անհատույց կարգով տասնչորս օրացուցային օրվա ընթացքում փոխարինել նորով:

Փոխարինման ժամկետը սկսվում է պատվիրատուի կողմից գրավոր տեղեկություն ուղարկելու օրվանից: Մատակարարը պարտավոր է շարքից դուրս եկած ճտքավոր կոշիկների և փոխարինման նպատակով համապատասխան նոր խմբաքանակի մատակարարումը նշված զորամաս իրականացնել իր ուժերով և միջոցներով, կազմելով համատեղ արձանագրություն փոխարինված խմբաքանակի վերաբերյալ:

Չափսի սանդղակ

Չափսերը	37/232	38/240	39/247	40/255	41/262	42/270	43/277	44/285	45/292	46/300	47/307	48/315	Ընդամենը %
Քանակը %	1	2	5.4	10.4	25	30	17	6	2.5	0.5	0.1	0.1	100

Ծանոթություն.

1. Պատվիրատուի պահանջով չափսերը կարող են փոփոխվել՝ ԳՕՍ 19137-89 1.2.3 կետի համաձայն:
2. Ճտքավոր կոշիկների չափսերը պետք է համապատասխանեն ԳՕՍ 11373-88-ի, իսկ տեսքը և կոշիկի կաղապարը ու դրա լայնությունը՝ ԳՕՍ 3927-88-ի պահանջներին:
3. Համաձայն ԳՕՍ 19137-89 1.3.7 կետի պահանջների՝ պատվիրատուի պահանջով կարող են փոփոխվել ճտքերի և կրունկամասի բարձրությունը, հետնամասի գոտու լայնությունը՝ համաձայն հաստատված նմուշի:
4. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված (օգտագործած բոլոր նյութերը պետք է արտադրված լինեն առնվազն 2019 թվականին, համաձայն ներկայացված որակի հավաստագրերի):

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
						4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 25.11.2020թ.
1	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	զ-զ	5000	13920	69600000	5000
2	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	զ-զ	5000	13920	69600000	5000
3	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	զ-զ	5000	13920	69600000	5000
4	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	զ-զ	5000	13920	69600000	5000
5	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	զ-զ	5000	13920	69600000	5000

Ծանոթություն: Ապրանքները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-20-7/2-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝
			4-րդ եռամսյակ
1	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	18811210/6	69600000
2	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	18811210/7	69600000
3	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	18811210/8	69600000
4	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	18811210/9	69600000
5	Ճտքավոր կոշիկներ /Կոշիկ ճտքավոր/	18811210/10	69600000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական
Միավորում» ՓԲԸ տնօրեն

Հ. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-20-7/2-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱԱՊՁԲ-20-7/2-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն